ՎԱՐԴԱՏՈՆ

# ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ` ԸՆԴՄԻՇՏ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԲԱԶՄԱԶԳ ՈՒ ԳՈՒՆԱԳԵՂ ԿՈԼՈՐԻՏ

(Սկիզբը` 4-րդ էջում)

Այնուհետեւ միջոցառումը վարող, «Հայարտուն» կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը ելույթների համար խոսափողի մոտ էր հրավիրում հռետորներին:



Բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը համաքաղաքացիներին կոչեց ապրել Սայաթ-Նովայի քարոզած ժողովուրդների բարեկամության ու մարդասիրության պատվիրաններով:

Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը արժեւորեց միջնադարի բանաստեղծի գրական վաստակը` ընդգծելով, որ պատահական չէ, որ ՅՈւՆԵՍԿՕ-ն 2013 թվականի պատմական կարեւոր տարեթվերի ցանկում ներառել է Սայաթ-Նովայի ծննդյան տարեթիվը:

Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին` հինավուրց ու հայաշատ «Հավլաբար» թաղամասում ծնված ու մեծացած վրացուհին, հիշեց թբիլիսյան բազմազգ բակի խաղաղ, ավանդական, մարդկային ջերմությամբ բնորոշվող նիստուկացը:

Իր ելույթում Հայաստանի Ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի տնօրեն, հայ դասական Ավետիք Իսահակյանի թոռ Ավիկ Իսահակյանը նշեց.

- Այսօրվա հանդիսույթը, երբ Վիրահայոց թեմի ղեկավարի կողքին նստած է Վրաստանի վարչապետը, խոսում է այն մասին, որ հայ-վրացական բարեկամությունը նոր էջ է թեւակոխում:

Նա իր շնորհակալությունը բերեց վրաց երկրին, որն իր գրկում խնամքով հանգչեցնում ու պահպանում է Սայաթ-Նովայի գերեզմանը...

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Սնխչյանը Սայաթ-Նովային համարեց թիֆլիսյան բազմազգ ու գունագեղ կոլորիտի ծնունդ:

Հայաստանյան հյուր, բանաստեղծ, «Շիրակ» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Մարգարյանը ողջունեց ներկաներին եւ ընթերցեց Սայաթ-Նովային նվիրված իր բանաստեղծությունը:

Միջոցառման ավարտին Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը բարձր գնահատեց Վրաստանի վարչապետի ներկայությունը Վարդատոնին եւ Սայաթ-Նովայի օրինակով ոգեկոչումը: Սրբազանը գնահատանքի խոսք ասաց միջոցառման բոլոր կազմակերպիչներին` Թբիլիսիի քաղաքապետարանին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնին, Վրաստանում Հայաստանի դեսպանության աջակցությամբ եւ Հայաստանի մշակույթի նախարարության հովանավորությամբ, այս տարվա Սայաթնովյան վարդատոնն այսպես փառահեղ անցկացնելու համար:

Տոնական հանդիսությունից հետո, Վրաստանի վարչա-





պետն այցելեց Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի, դիտեց տաճարում ընթացող վերանորոգման աշխատանքները: Առաջնորդարանում տեղի ունեցավ հյուրասիրություն:

Ուրախ տոնախմբության զարդը այս Վարդատոնին եւս դարձավ Երեւանից ժամանած հանրային ռադիոյի «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր համույթը` Հայաստանի ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի ղեկավարությամբ:

Համերգային ծրագրում մասնակցեցին վրացական «Քսովրելեբի» ժողովրդական համույթը (ղեկ.` Է.Շոշիկաշվիլի), Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասանները` Վրաստանի վաստակավոր արտիստ Ռ.Հովհաննիսյանը, Ռ.Աղաջանյանը, Ս.Էլիբեկյանը, «Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Ջեյրան» պարային համույթը, Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Ա.Կիրակոզովը, քամանչահար Ս.Քամալովը, բանաստեղծ Գ.Ղալամքարովը, երգիչներ Նինա Կարապետյանը, Հենրիխ Պետրոսյանը, դպրոցական պարային «Վանք», «Անի» համույթները (ղեկ.ղեկ.` Լ.Կաշավանիձե, Ա.Նազարյան), ասմունքող Էլզա Թորոսյանը:

Ժողովրդական ուրախ երգ ու պարով, գեղեցիկ ասմունքով Վարդատոն-2013-ը նորից դարձավ իրավամբ ժողովրդական մեծ տոն, որի ուղենիշը ժողովուրդների բարեկամության գովերգումն էր:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*
*Լուսանկարները` ՅՈՒՐԻ ԱԿՈՒԼՅԱՆԻ*



ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՖԻԼՄ

*Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնում կայացավ «Երեկ, այսօր եւ ընդմիշտ» վավերագրական ֆիլմի ցուցադրումը, որի ռեժիսորն է ծնունդով թբիլիսցի, այժմ` երեւանաբնակ կինոռեժիսոր Էդուարդ Եդիկիսելովը: Սցենարի հեղինակ` Է.Ասին:*

Վավերագրական ֆիլմը 19-րդ դարի Թիֆլիսի, այստեղ ապրող եւ գործող մեծահարուստների, հասարակական ու մշակութային գործիչների գործունեության մասին անդրադարձով, փորձում է ներկայացնել այն օրերի արվեստով շնչող, «արեւելքի փոքր Փարիզ» Թիֆլիսում, ստեղծված արգասավոր մթնոլորտը, ուր հանձին մշակույթը հարգող եւ այն հովանավորելու պատրաստակամությամբ լի հայ



մեծ բարերարներ Մանթաշովի, Թամամշեւի, Արամյանցի եւ ուրիշների ազգանպաստ գործունեության եւ այստեղ ակտիվորեն գործող հայ դերասանական զանազան սիրողական խմբերի` մեծահարուստներ Պիտոեւի, Զուբալովի, Մուրաշովի մասնաշենքերում տրված ներկայացումների, կար հայոց թատրոնի ստեղծման բոլոր նախապայմանները: Ապա, կադր առ կադր գծվում է 1856-ին հիմնադրված եւ հայ բեմարվեստի նվիրյալ Գեւորգ Չմշկյանի ղեկավարած թատերարվեստի կորիֆեյներ Պ.Ադամյանի, Հ.Աբելյանի, Վ.Փափազյանի, Սիրանույշի, Հր.Ներսիսյանի, ապա եւ Բ.Ներսիսյանի, Դ.Ամիրբեկյանի, Է.Ստեփանյանի, Ռ.Պապովյանի եւ այսօր թատրոնում աշխատող դերասանների անզուգական արվեստով իր շքեղ տարեգրությունը կերտած եւ այսօր կերտող հայ մշակույթի կաճառի պատմությունը:

Թատրոնի մեր օրերի ավագ, միջին, երիտասարդ սերունդ ներառող ստեղծագործական խմբի, նրա ներկայիս գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի, ռեժիսորներ Լեւոն Ուզունյանի, Ռոման Մատիաշվիլու, այլոց հարազատ օջախի հարուստ ավանդույթները պահպանելուն եւ զարգացնելուն միտված գործունեության մասին ֆիլմում, գնահատանքի վկայումներով հանդես են գալիս ժամանակակից թատերարվեստի ճանաչված ու հայտնի գործիչներ Վահե Շահվերդյանը, Երվանդ Ղազանչյանը, թատերագետ Լեւոն Մութաֆյանը եւ ուրիշները:

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնին նվիրված առաջին վավերագրական կինոժապավենը, հարկավ, իր շնորհակալ առաքելությունը կունենա այդ մշակութային ճանաչված օջախի շարունակվող տարեգրության մեջ:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*
*Լուսանկարում.- Կադրեր ֆիլմից*

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱԹԽԱՅՈՒՄ

*Հունիսի մեկին Նինոծմինդայի շրջանի Սաթխա գյուղում հանդիսավոր նշվեց 1918 թվականին Սաթխայի հերոսամարտի տարելիցը:*

Այդ օրը գյուղի եկեղեցում մատուցվեց սգո պատարագ` նվիրված հերոսամարտի անմեղ նահատակներին: Սաթխայի եկեղեցում պատարագիչը Տեր Թադեոս քահանա Տեր-Մկրտչյանն էր: Պատարագին ներկա էին հյուրեր Թբիլիսիից, Երեւանից, Ախալցիխեից, Ախալքալաքիից, Ծալկայից, այլ վայրերից:

Նշենք, որ Սաթխայում հերոսամարտին նվիրված հանդիսավոր միջոցառումներն անցկացվեցին սաթխացի Սանոսյան ընտանիքի անմիջական աջակցությամբ եւ օժանդակությամբ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԴԱՄԱԼԱՅԻ ԴՊՐՈՑԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ Է ԱԽԱԼՑԻԽԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ

## ԴՊՐՈՑ - ԲՈՒՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԴԵՐԸ

*Ասպինձայի շրջանի Դամալա գյուղի հայկական հանրային դպրոցում տեղի ունեցավ հանդիպում Ախալցիխեում գործող պետական ուսումնական համալսարանի ռեկտոր Մերաբ Բերիձեի, բուհի դասախոսական կազմի եւ ուսանողների հետ:*

Հանդիպումը իր հիմքում նպատակ ուներ ընդգծել դպրոց-բուհ համագործակցությունը` որպես կրթության մի նոր գործոն:

Իրենց բովանդակալից ելույթներով հանդես եկան համալսարանի ռեկտոր Մ.Բերիձեն եւ դպրոցի տնօրեն Նելլի Դուդուկչյանը:

Ուսուցիչները եւ աշակերտները հավանություն տվեցին համալսարանի հետ համագործակցության գործընթացին, եւ երկու ուսումնական հաստատությունների ղեկավարները «Հուշագիր» ստորագրեցին:

Այդ հուշագրի շրջանակներում, ռեկտոր Մերաբ Բերիձեի հատուկ հրավերով, Դամալայի հանրային դպրոցի սաները եւ ուսուցիչները հյուրընկալվեցին համալսարանում, որտեղ ջերմ ընդունելության արժանացան ու հիանալի ժամանակ անցկացրին:

Հատկապես հետաքրքիր էր համալսարանում կազմակերպված սպորտային մրցույթները` սեղանի թենիս, վոլեյբոլ, շախմատ, որոնց մասնակցության համար Դամալայի աշակերտները` Ֆելիքս Աստատուրյանը, Արայիկ Թորոյանը, Կարեն Քերոբյանը, Սերգեյ Խաչոյանը, Գեւորգ Քերոբյանը, Լեւոն Հակոբյանը, Սիփան Բեքիրյանը, Մարտին Պետրոսյանը, Ժիլբերտ Սաղաթելյանը, Վաչագան Բաղդասարյանը, Դանիել Բալոյանը, Ֆիլարետ Թորոյանը, ստացան պատվոգրեր: Հատկապես գովելի էր Սիփան Բեքիրյանի շախմատում ունեցած հաջողությունը: Սաների ակտիվություն ցուցաբերելու համար շնորհակալություն հայտնեցին նրանց ուսուցիչներին` Անաստաս Գրիգորյանին, Խաչիկ Սոֆոյանին, Նաթիա Ձեդգինձեին:

Նման համագործակցությունները նպաստում են հայկական դպրոցների աշակերտների ակտիվությանը, վրաց լեզվով հաղորդակցմանը, կարողությունների ու հմտությունների ամրապնդմանը եւ, ի վերջո, կրթամշակութային դաշտում ինտեգրման գործընթացի արագացմանը:

*ՆԵԼԼԻ ԴՈՒԴՈՒԿՉՅԱՆ*
*Դամալայի հանրային դպրոցի տնօրեն`*

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

ìºð²´ºðØàôÜø

## ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԱԿՆԿԱԼԵԼ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻՑ



***Փոքրիկս մեկ տարեկան է, նոր է սկսել քայլել: Եվ պետք է ասեմ, որ արդեն անակնկալներ է մատուցում, հայտնվում է տան այնպիսի անկյուններում, ուր, ուղղակի անհնար է մտնելը: Շատ լարված վիճակում եմ. ինչպե՞ս վարվել:***

***Մ.Ս.***

***Ախալքալաքի***

Մեկ տարեկան երեխան արդեն կարողանում է առարկաների հետ տարբեր գործողություններ անել՝ օղակներն անցկացնել բուրգին, խորանարդիկներն իրար վրա դասավորել, խաղալիքները դնել դարակում եւ այլն: Դուք չպետք է անհամբերություն ցուցաբերեք կամ անհանգստանաք, եթե նկատեք, որ այդպիսի գործողություններ անելը երեխայից երկար ժամանակ է պահանջում. դա բնական է: 10-11 ամսականում երեխաները հեշտությամբ կարողանում են մի հենարանից տեղաշարժվել դեպի մյուսը, փոքրիկ «սար» բարձրանալ եւ իջնել, իսկ արդեն 12-րդ ամսում փոքրիկներն սկսում են ինքնուրույն քայլել: Այս շրջանում երեխաներն առանձնապես զգայուն են եւ տարբեր կերպ են վերաբերվում շրջապատի մեծերին:

Փոքրիկները ձգտում են լինել նրանց ընկերակցությամբ, ովքեր ավելի քնքուշ են, իսկ համեմատաբար խիստ մարդկանց նկատմամբ նրանք զգուշավորություն են դրսեւորում:

Երեխաները կարող են անտարբեր մնալ անգամ իրենց ամենասիրելի խաղալիքի նկատմամբ, եթե այն անծանոթ մարդու ձեռքին է: Երեխաները բացասաբար են արձագանքում նոր միջավայրին, ինչը պետք է անպայման հաշվի առնել:

ÎºÜò²Ô²ÚÆÜ

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԵՐԱՆԱԽԱԳԾՈՒՄ



***Ցանկանում եմ փոխել բնակարանում սենյակների դասավորությունը, թեպետ շատերը խորհուրդ չեն տալիս: Ի՞նչ կասեիք այս կապակցությամբ:***

***Վ.ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ***

***Բաթումի***

Մեր օրերում բնակարանները վերանորոգելիս՝ ավելի ու ավելի հաճախ են ձեւափոխություններ կատարում, սակայն վերանախագծման ժամանակ շատ սխալներ են թույլ տալիս՝ չհասկանալով, թե ինչի կարող է հանգեցնել այս կամ այն վերակառուցումը:

Սենյակները, խոհանոցը եւ սենյակներից մեկը կամ լոգարանն ու զուգարանը միմյանցից բաժանող պատերը վերացնելը կամ դրանք տեղափոխելը վերակառուցման ամենատարածված ձեւերն են: Ե՛վ բնակիչները, ե՛ւ այդպիսի աշխատանքներ կատարող վարպետներից շատերը, ցավոք, կարծում են, թե վտանգավոր է միայն կրող պատերին դիպչելը, իսկ մնացածի հետ կարելի է սրտիդ ուզածն անել: Բայց դա այնքան էլ այդպես չէ:

Իսկապես, հիմնական պատերին չի կարելի դիպչել, քանի որ դա լուրջ ձեւախախտումների եւ փլուզումների կարող է հանգեցնել: Հատկապես դրա մասին պետք է հիշեն, եւ դա հաշվի առնեն նրանք, ովքեր ապրում են բազմահարկ պանելային շենքերում, քանի որ այդպիսի շենքերում գրեթե բոլոր միջնապատերն էլ կրող են:

Սակայն հարցն այն է, որ նաեւ այն պատերին է պետք ծայրահեղորեն զգույշ վերաբերվել, որոնք կրող չեն, քանի որ, առաջին. դրանք պետք է տեղաշարժել միայն անհրաժեշտ թույլտվությամբ, երկրորդ. դա պետք է անել՝ միայն պատը ալմաստե կտրիչով կտրելով: Իսկ հարվածելով քանդելը, ինչպես հաճախ են անում, կտրականապես անթույլատրելի է, որովհետեւ վնասվում են հարեւանությամբ գտնվող միջնորմները:

Այժմ նորաձեւ է վերացնել սենյակը եւ խոհանոցը բաժանող պատը, բայց քչերը գիտեն, որ դա կարելի է անել միայն այն դեպքում, եթե խոհանոցում էլեկտրական սալօջախ է դրված: Գազօջախի դեպքում, այդպիսի վերանախագծումը հակահրդեհային անվտանգության տեխնիկայի տեսանկյունից անթույլատրելի է:

ԱՔՍԵՍՈՒԱՐՆԵՐ

## ԿԱԽԱԶԱՐԴԵՐԸ ԵՎ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*Մարդու բնավորության առաջին արտահայտիչը նրա ճաշակն է: Ուստի, ելնելով նրանից, թե ինչպես է մարդ հագնվում, ինչն է գերադասում, ինչ զարդեր է կրում, կարելի է որոշակի կարծիք կազմել նրա մասին:*

**Մատանիներ.**- Մատնեմատին դրած մատանին (բացի ամուսնականից) խոսում է այն մասին, որ կրողը սիրում է գեղեցիկը, շքեղությունը եւ արվեստը: Եթե ձեր ընկերուհին կամ ընկերը երբեք չեն հանում մատանին այս մատից, ապա սուր զգացողություններ են փնտրում: Մատնեմատին դրված մատանին վկայում է նաեւ տիրոջ ռոմանտիկ անհատականության մասին:

Ճկույթին դրված մատանու տերը սովորաբար փոփոխական, եսասեր ու թեթեւամիտ բնավորություն ունի: Ավելին, ճկույթի մատանին վկայում է, որ այդ մարդը զվարճասեր է, պատրաստ՝ դավաճանության, նույնիսկ մոլեխաղերի սիրահար է: Նման մարդուց շատ բան չի կարելի սպասել: Իհարկե, կանոններից բացառություններ շատ են լինում, այնպես որ, չարժե միանգամից խզել բոլոր հարաբերությունները նման մարդկանց հետ: Պարզապես, պետք է ավելի ուշադիր լինել եւ հետեւել նրանց քայլերին ու վարվելակերպին:



Եթե մարդը մի քանի մատանի է կրում, ապա դա խոսում է նրա հետաքրքիր եւ անսովոր անհատականության մասին:

Ցուցամատին մատանի կրողները սովորաբար ամաչկոտ, անվստահ բնավորություն ունեն: Հաճախ դժվարություններ են ունենում հակառակ սեռի հետ շփման ժամանակ: Սակայն, ցուցամատին դրված մատանին նրանց վստահություն է ներշնչում եւ նույնիսկ նպակասլացության զգացողություն առաջացնում: Եթե ժամադրության ժամանակ ձեր ընտրյալի ցուցամատին մատանի տեսնեք, ապա իմացեք, որ նա պատրաստ է պայքարի մեջ մտնել ձեզ համար եւ լուրջ մտադրություններ ունի:

**Ժանիք կրողներ.**- Հաղթանակող, ինքնահավան, եսասեր. ահա թե ինչպես կարելի է բնութագրել այն մարդուն, ով իրեն զարդարում է նմանատիպ զարդով: Ժանիքը հաղթանակի նշան է: Նման զարդեր կրող տղամարդիկ փոփոխական սիրահետողներ են: Իսկ կանայք ձգտում են առաջնորդ լինել եւ ընդունակ են հաղթահարել մինչ այդ անհաղթահարելի համարվող գագաթներ: Այս մարդիկ առանձնանում են համառությամբ ու դյուրագրգռությամբ: Սիրո մեջ կայուն չեն: Նրանց նպատակն է. հրահրում, հավերժական խաղ եւ ճանապարհից շեղելու ցանկություն:

**Գանգ.**- Վերջին շրջանում գանգանման կախազարդերը թեեւ բավական նորաձեւ են, սակայն, համաձայնեք, որ շատերը չեն խիզախի նման խորհրդանիշ ընտրել: Տարօրինակ է, սակայն նման մարդիկ դրական ու լուսավոր անհատականություններ են: Նրանք բնածին լավատեսներ են, եւ շատ զվարճախոս: Գանգը նրանց կողմից ընկալվում է՝ որպես մահվան դեմ տարած հաղթանակ: Սկանդալային արտաքինի տակ թաքնված են ընտանիքի եւ ամուսնության վերաբերյալ հաստատուն սկզբունքներ ունեցող անհատներ: Եվ եթե երբեւէ որոշում են ամուսնանալ, ապա մեկընդմիշտ հավատարիմ են մնում իրենց ամուսիններին:

**Հովիար.**- Աքսեսուարի այս տեսակը նախընտրում են կայուն ու հաջողակ կանայք: Հաճախ նման կանայք աչքի զարնող զարդեր չեն կրում: Նրանք ցանկանում են, որ իրենց գնահատեն արժանիքներով, այլ ոչ թե արտաքին գեղեցկությամբ: Ընդունված կարծիք կա, որ այսօրինակ զարդ նախընտրում են սիրային ողբերգություն ապրած կանայք, ովքեր փորձում են հովիարի հետեւում թաքնվել արտաքին աշխարհից: Նրանց թեեւ չի կարելի համեմատել մենաստանի բնակիչների հետ, սակայն չափազանց մեծ ուշադրությունը հունից հանում է: Նրանց հատուկ է սեփական անձի ուսումնասիրությունը: Բացի այդ, նրանց մշտապես հետապնդում է խաբված լինելու զգացողությունը, ուստիեւ չեն վստահում հակառակ սեռին:

## ԱՆՊԵՏՔ ԻՐԵՐ

Պահարաններում անպետք իրեր հավաքող ու պահող մարդիկ կարող են իրենք իրենց վնասել այդ վատ սովորության պատճառով, քանի որ դա հանգեցնում է էներգիայի լճացման եւ թույլ չի տալիս, որ մարդը հոգեպես զարգանա, խանգարում է կարիերայի սանդուղքով նրա առաջընթացին եւ կանխում նյութական վիճակի բարելավումը: Իհարկե, դժվար է քեզ ու մտերիմներիդ համոզել, որ անհրաժեշտ է բաժանվել հին ու անպետք իրերից, սակայն ոչ սիրելի եւ չօգտագործվող իրերը ամենեւին դրական էներգիայով չեն լիցքավորում:

Ավելին, «ցի» դրական էներգիան, որը լցնում է շրջակա ողջ տարածությունը, պետք է բնակարանում ազատ շրջանառության մեջ լինի: Եվ եթե այն իր ճանապարհին հին ու անպետք իրերի տեսքով խոչընդոտների է հանդիպում, սկսում է լվանալ, ինչը հանգեցնում է նաեւ կյանքի լճացման: Եթե դարակների վրա գրքեր են փոշոտվում, որոնք դու այլեւս չես վերընթերցելու, անհապաղ բաժանվի՛ր դրանցից, հակառակ դեպքում, դա կարող է խանգարել նոր գաղափարների հղացմանը: Իսկ դարակների վրա կուտակվող իրերը կարող են սահմանափակել քո ձգտումները եւ դրանց իրագործման հնարավորությունները:

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՌԸ ԴԴՈՒՄԸ՝ ԵՆԹԱՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԳԵՂՁԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՂԱՄԻՋՈՑ

***Կոլորադո համալսարանի գիտնականները հայտնաբերել են, որ չինական դառը դդումն օժտված է ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի առաջացումը կանխող հատկանիշով:***

Դառը դդումի բուժիչ հատկության մասին հայտնի է եղել դեռ հնուց, ինչի արդյունքում, բանջարեղենի այս տեսակը կիրառվում է նաեւ շաքարային դիաբետի դեմ պայքարում: Ավելի վաղ արված հետազոտությունները ցույց են տվել, որ դառը դդումը պարունակում է բնական տարրեր, որոնք արդյունավետորեն օգնում են դիաբետի հատկապես երկրորդ տեսակի դեմ պայքարում:

Նոր հետազոտությունները բացահայտել են դառը դդմի «հակաքաղցկեղային» հատկությունները: Գիտնականների խոսքով, երեք տարի առաջ բացահայտվել է, որ այն սպանում է ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի բջիջները: Վերջին փորձարկումները կիրառվել են մկների վրա: Կրծողներին խմեցրել են դառը դդմի հյութ, որի միջոցով նրանց մոտ շուրջ 60 տոկոսով կրճատվել է ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի առաջացման հավանականությունը:



## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մարդկության հոգին կրթյալ կինն է:

***ՐԱՖՖԻ***
***(1835-1888)***
***Հայ գրող***

Սեփական ընտանիքի բնականոն ընթացքն ապահովելը հաճախ ավելի դյուրին չէ, քան նահանգ կառավարելը:

***ՏԱԿԻՏՈՍ***
***(58-117)***
***Հռոմեացի պատմագիր***

Կյանքում միակ երջանկությունը մշտապես առաջ գնալու ձգտումն է:

***ԷՄԻԼ ԶՈԼԱ***
***(1840-1902)***
***Ֆրանսիացի գրող***

Յուրաքանչյուր մարդ ծնվում է որեւէ գործի համար: Յուրաքանչյուրը, ով ապրում է երկրի վրա, իր պարտականություններն ունի:

***ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ***
***(1899-1961)***
***Ամերիկացի գրող***

Մուսուլմանները չեն աշխատում ուրբաթ, հրեաները՝ շաբաթ, քրիստոնյաները՝ կիրակի... Ո՞վ կինարի կրոն, որպեսզի չաշխատենք երկուշաբթի:

***Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ***
***«Վրաստան» թերթի ընթերցող***

²Ü º Î ¸ à î Ü º ð

** Իդեալական կանայք շախմատիստուհիներն են. նրանք կարող են ժամերով լռել, լավ են հետեւում ֆիգուրաներին եւ գիտեն շատ հետաքրքիր դիրքեր:*

** Ես չգիտեմ, թե ինչպիսի ընկեր եմ, սակայն լավ թշնամի եմ:*

** Դժվար է լավ բանի հույս փայփայել, երբ արձակուրդդ ես գնում բնակարանդ վերանորոգելու նպատակով:*

** Աղջիկը.*

*- Ես վերջապես հանձնեցի վարորդական իրավունքի բոլոր քննությունները: Ցանկանում եմ մեքենա գնել: Գուցե խորհուրդ տաս, թե ո՞րն է աղջկա համար ամենալավ մեքենան:*

*Տղան.*

*- Լվացքի:*

** - Աստված իմ, ես ցանկանում եմ հաստ քսակ եւ բարակ մեջք: Եվ խնդրում եմ՝ չշփոթես՝ ինչպես նախորդ անգամ:*

** Որդին հարցնում է հորը.*

*- Հայրի՛կ, դու հիշո՞ւմ ես, թե ինչպիսի օր էր, երբ հանդիպեցիր մեր մայրիկին:*

*- Անհաջող, տղա՛ս:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Հունիսի 5-ին Հայաստանի նախագահ, Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրել էր Ազգային անվտանգության խորհրդի նիստ, որին ներկա էին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը, նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գոռիկ Հակոբյանը, ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը: Նիստի օրակարգի հարցերի շրջանակում քննարկվել են Հայաստանի էներգետիկ անվտանգության եւ տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ ամրապնդման հարցերը:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ



*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) նախագահ Ժան Կլոդ Մինյոնին:*

ԵԽ անդամակցությունից 12 տարի հետո Հայաստանի կողմից կազմակերպության նախագահությունն ստանձնելը Հայաստանի նախագահը մեծ պատիվ եւ պատասխանատվություն է համարել Հայաստանի համար:

Հանդիպմանն անդրադարձ է եղել ԵԽ անդամակցությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքին, մի շարք ուղղություններով մինչ այժմ իրականացված եւ ընթացիկ բարեփոխումներին, ԵԽ նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահության շրջանի գերակայություններին, ինչպես նաեւ ԼՂ հարցի կարգավորման գործընթացին ու տարածաշրջանային իրավիճակին:

Նույն օրը կայացավ նաեւ Հայաստանի արտգործնախարար, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահ Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը Հայաստանում գտնվող Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ժան Կլոդ Մինյոնի հետ:

## ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐ

*Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը Մինսկում երկկողմ հանդիպում է ունեցել Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի հետ: Զրուցակիցները քննարկել են հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններին առնչվող հարցերի լայն շրջանակ:*



Այդ համատեքստում, անդրադարձ է կատարվել եվրասիական տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացներին եւ դրանց Հայաստանի մասնակցության հնարավոր ձեւաչափերին:

Անդրադառնալով էներգետիկ ոլորտում փոխգործակցությանը` պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջին փուլում նախ աշխատել գործող ատոմակայանի գործունեության ժամկետի երկարաձգման, այնուհետեւ` նոր բլոկի կառուցման շուրջ:

Կողմերն անդրադարձել են նաեւ գազի գնի 30 տոկոս սուբսիդավորմանը, մասնավորապես, թե ինչ սկզբունքների ներքո պետք է այն գործի: Պայմանավորվածություն է ձեռք բերվել այն կիրառել գրանտային բաղադրիչի տեսքով, ինչի շուրջ բանակցությունները դեռեւս կշարունակվեն:

Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների ղեկավարները քննարկել են երկկողմ առեւտրաշրջանառության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաեւ համատեղ այլ ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր:

## ՀԱՍՏԱՏՎԵՑ ԳԱԶԻ ՆՈՐ ՍԱԿԱԳԻՆԸ

*Հայաստանի հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը միաձայն հաստատեց գազի նոր սակագինը. հազար խորանարդ մետրի համար` 156 հազար դրամ: Հազար խորանարդ մետրից ավելի սպառողները կվճարեն 276,98 դոլար: Նոր սակագինն ուժի մեջ կմտնի հուլիսի 7-ից:*

Հիշեցնենք, որ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն եւ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ-ն դիմել են Հայաստանի հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով` առաջարկելով գազի սակագինը 132 000 դրամից բարձրացնել 221000 դրամի: Կառավարությունը հայտարարել էր, որ 30 տոկոսով կսուբսիդավորի գազի սակագինը` միաժամանակ պահպանելով անապահով ընտանիքների կողմից սպառած բնական գազի համապատասխան քանակության համար փոխհատուցումը: Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացումը նախատեսվում է 7-8 դրամով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՄՆ-ՈՒՄ

*Հունիսի 3-4-ը ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը գտնվում էր Միացյալ Նահանգներում: ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում նա հանդիպումներ ունեցավ ԱՄՆ Կոնգրեսում եւ ելույթով հանդես եկավ Ռազմավարական ու միջազգային հետազոտությունների կենտրոնում: Այցի շրջանակներում, Էդվարդ Նալբանդյանը հանդիպեց նաեւ ամերիկահայ կազմակերպությունների ներկայացուցիչներին:*



Վաշինգտոնում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հունիս 4-ին հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի հետ:

Հայաստանի եւ ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները քննարկեցին երկկողմ հարաբերությունների տարբեր բնագավառներին վերաբերող հարցերի լայն շրջանակ, տնտեսական փոխգործակցության զարգացման հնարավորությունները:

Ջոն Քերրին վերահաստատել է Միացյալ Նահանգների հանձնառությունը շարունակել ամենայն աջակցությունը հայ-թուրքական հարաբերությունների լիակատար կարգավորման գործում: Հանդիպման ընթացքում, հանգամանալից մտքեր են փոխանակվել ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ: Ընդունելով Հայաստան այցելելու հրավերը` Ջոն Քերրին տեղեկացրել է, որ ցանկություն ունի այն իրականացնել այս տարվա ընթացքում:

## ՊԵՏԲՅՈՒՋԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՊԱԿԱՍՈՒՐԴՈՎ



*Ազգային ժողովի տնտեսական հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների հունիսի 5-ի համատեղ նիստում քննարկվեց «Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվությունը:*

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 1 տրիլիոն, 44 մլրդ դրամ ծախսերի կատարում: Տարվա ընթացքում, ծրագիրն ավելացվել է 33 մլրդ դրամով (3.2% ով) եւ կազմել 1 տրիլիոն, 77 մլրդ դրամ: Փաստացի ծախսերը կազմել են 1 տրիլիոն, 6 մլրդ դրամ` ապահովելով ծրագրի 93,4% կատարողական, ինչը պայմանավորված է որոշ ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսմամբ ու առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգմամբ:

2012 թվականի պետական բյուջեն կատարվել է 59,9 մլրդ դրամ պակասուրդով:

## ԱՆՑՈՒՄ «ԲԱՑ ԵՐԿԻՆՔ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

*Հայաստանն անցնում է փուլային տարբերակով օդային փոխադրումների ազատականացմանը, որի ռազմավարությունն ընդունվեց Հայաստանի կառավարության նիստում:*

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ այս ոլորտում կլինեն առնվազն 3 հայկական ավիաընկերություններ, որոնք կընտրվեն մրցութային տարբերակով: Ինչպես նշեց ՀՀ քաղավիացիայի գլխավոր վարչության պետ Արտյոմ Մովսիսյանը, նախատեսվում է ազատականացնել նաեւ ԵՄ-ի հետ օդային փոխադրումները: Միաժամանակ, ՀՀ քաղավիացիայի գլխավոր վարչության պետը նշեց, որ հայկական ավիաընկերությունները, որոնք գործունեություն են ծավալելու, առաջնային կերպով օգտվելու են «Արմավիա»-ի կադրային ռեզերվից, որն ունի ե՛ւ մեծ փորձ, ե՛ւ ներուժ:

Հիշեցնենք, որ «Արմավիա» ավիաընկերությունը հայտարարել էր սնանկության գործընթաց սկսելու մասին ու ապրիլի 1-ից դադարեցրել էր չվերթերը:

### ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

***Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանն ընդունել է Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի նորանշանակ մշտական ներկայացուցիչ Թերեզա Դաբան Սանչեսին, ով այդ պաշտոնում փոխարինում է առաքելությունն ավարտած Գիլերմո Տոլոսային: Հայաստանի կառավարության ղեկավարը շնորհավորել է Թերեզա Դաբան Սանչեսին նոր պաշտոնում նշանակվելու կապակցությամբ: Այնուհետեւ, զրուցակիցները քննարկել են երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:***

### ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ԿՐԿԻՆ ՃԱՆԱՉԵԼ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

***Հռոմի Ֆրանցիսկոս պապը վերահաստատել է ավելի վաղ արված իր հայտարարությունը եւ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Պապը Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանություն է որակել երկուշաբթի օրը Վատիկանում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկե հայոց կաթողիկոս-պատրիարք Ներսես Պետրոս XIX գլխավորած պատվիրակության հետ հանդիպման ժամանակ:***
***Նշվում է, որ երբ պատվիրակներից մեկն ասել է, որ ինքը Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներից է, Ֆրանցիսկոս պապը պատասխանել է. «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը հայերինն էր»: Այս կերպ Պապը կրկնել է իր ավելի վաղ` դեռեւս կարդինալ եղած ժամանակ Բուենոս Այրեսում արած հայտարարությունը:***

### ՄՈՆՍԵՐԱՏ ԿԱԲԱԼԻԵՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ



***Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հունիսի 4-ին ընդունել է աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալիեին:***
***Բակո Սահակյանը ողջունել է Մոնսերատ Կաբալիեին արցախյան հողում` նշելով, որ նա ունի շատ երկրպագուներ հանրապետությունում: Երկրի ղեկավարն ընդգծել է, որ հանրաճանաչ արվեստագետների հետ համագործակցությունը մեծապես կնպաստի Արցախում մշակույթի զարգացմանը:***

### ՊՈԿՎԵԼ Է ԶՎԱՐԹՆՈՑԻ «VIP» ՍՐԱՀԻ ՏԱՆԻՔԸ

***Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունում հունիսի 6-ին ահազանգ է ստացվել, որ քամին պոկել է Զվարթնոց օդանավակայանի «VIP» սրահի տանիքը եւ նետել ավտոմեքենաների վրա: Դեպքի վայր են մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ եւ ՃԿԿ ԱԻ արչագանքման խմբերը եւ մեկ մարտական հաշվարկ: Տուժածներ չկան:***

### ԱՎԵԼԱՑԵԼ Է ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

***Հայաստանում 2013թ. հունվար-ապրիլ ամիսներին իրավախախտումների թիվն ավելացել է, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2013թ. առաջին չորս ամիսների ընթացքում, գրանցվել է 5 հազար 448: Ըստ տրամադրած տեղեկությունների, գրեթե բոլոր հանցատեսակներում գրանցված հանցագործությունների դեպքերն ավելացել են:***
***2012թ. հունվար-ապրիլ ամիսներին հանրապետությունում գրանցվել է 4 հազար 871 հանցագործություն` 577-ով զիջելով այս տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՀՈՒՆԻՍ



***11.06.2013. Սուրբ Կոստանդիանոս կայսեր եւ նրա մոր՝ Հեղինեի հիշատակության օր***

Կոստանդիանոս կայսրը Հռոմեական կայսրության հանրահայտ դեմքերից է: Նա եկեղեցին պաշտոնապես ազատել է ավելի քան 250 տարի տեւած հալածանքներից եւ 313 թվականին Միլանի հրովարտակով քրիստոնեությունը թույլատրելի կրոն հռչակել: Կոստանդիանոսի մայր Հեղինե թագուհուն է վերագրվում Քրիստոսի խաչափայտի գյուտը 327 թվականին:

***15.06.2013. Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը***

Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը հայոց ամենամեծ սրբի հիշատակին նվիրված երեք տոներից մեկն է: Ըստ ավանդության, Հայոց մեծ դարձից հետո, Սուրբ Գրիգոր Լուսավորիչն իր կյանքի վերջին տարիներն ավարտում է ճգնակեցությամբ՝ Սեպուհ լեռան Մանեի այրում, որտեղ էլ վախճանվում է 326 թվականին: Նրա մարմինը գտնում են հովիվները, որոնք, չճանաչելով մահացած կաթողիկոսին, մարմինը ծածկում են քարակույտի տակ: Հետագայում Սուրբ Գրիգոր Լուսավորիչը տեսիլքով հայտնում է իր նշխարների տեղն աշակերտներից Գառնիկ Բասենցուն, որից հետո Հայրապետի նշխարները տեղափոխվում եւ ամփոփվում են Դարանաղի գավառի Թորդան գյուղում:

## ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

### Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Մ Է

2013/2014 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների եւ մասնագիտացումների գծով.

***Մագիստրոսի որակավորմամբ՝***

«Ֆինանսներ եւ վարկ»

«Հաշվառում եւ աուդիտ»

«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»

***Ուսման տեւողությունը՝ 1 տարի - առկա կրթաձեւով:***

***Բակալավրի որակավորմամբ՝***

«Ֆինանսներ եւ վարկ» ***(բանկային գործ)***

«Ֆինանսներ եւ վարկ» ***(մաքսային գործ)***

«Հաշվառում եւ աուդիտ» ***(տնտեսական գործունեության իրավական պաշտպանություն)***

«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»

***Ուսման տեւողությունը՝ 4 տարի - առկա եւ հեռակա կրթաձեւով:***

***Կրտսեր մասնագետ որակավորմամբ՝***

«Հաշվապահական հաշվառում»

«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր» մասնագիտություններով, որտեղ ընդունվում են 9-րդ դասարանի ավարտական վկայականով:

***Ուսման տեւողությունը համապատասխանաբար՝ 2 տարի 10 ամիս եւ 3 տարի 10 ամիս - առկա կրթաձեւով:***

Շրջանավարտները ուսումը կշարունակեն համալսարանի 2-րդ կուրսից, գերազանց առաջադիմություն ցուցաբերածները 3-րդ կուրսից՝ համապատասխան մասնագիտությամբ:

Մասնաճյուղի շրջանավարտները ստանում են Ուկրաինայի Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի պետական դիպլոմ, որը ճանաչվում է աշխարհի 82 երկրում:

***Տեղեկությունների համար դիմել՝ ՀՀ, ք. Երեւան, Ավան, Աճառյան 31***

***հեռ. (+374 10) 61-22-02, 61-30-10, 62-29-69 (Երեւան), 5-74-21-31-81 (Թբիլիսի)***

***e-mail: erfiltanx@yahoo.com www.eftneu.am***

ՖՈՒՏԲՈԼ ՖՈՒՏԲՈԼ

## ՀՐԱԺԵՇՏԻ ՄՐՑԱՄԱՐՏ «ԴԻՆԱՄՈ» ՄԱՐԶԱԴԱՇՏՈՒՄ



Թբիլիսիում մայիսի 31-ին, Բորիս Պայճաձեի անվան «Դինամո-արենա» մարզադաշտում անցկացվեց մրցամարտ, որով հայտնի վրաց ֆուտբոլիստ Կախի Կալաձեն հրաժեշտ տվեց ֆուտբոլին: Իտալական «Միլանի» սիմվոլիկ թիմը 3:1 հաշվով հաղթեց Կախի Կալաձեի բարեկամների թիմին: Գոլերը խփեցին Գիորգի Դեմետրաձեն, Ինձագին, Շեւչենկոն, Վերխովոդը:

«Միլանի» կազմում հանդես եկան ճանաչված ֆուտբոլիստներ Պաոլո Մալդինին: Անդրեյ Շեւչենկոն, Սեբաստիանո Ռոսին, Ֆիլիպո Ինձագին, Պիետրո Վերխովոդը եւ ուրիշներ:

«Կախի Կալաձեի բարեկամներ» թիմում ելույթ ունեցան Կալաձեն, Դավիթ Մուջիրին, Սերգեյ Ռեբրովը, Շոթա եւ Արչիլ Արվելաձեները, Ֆաբիո Կանավարոն, Գիորգի Դեմետրաձեն եւ ուրիշներ:

«Միլանի» փոխնախագահ Անդրիանո Գիլիանին հանդիպման ընթացքում Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն հանձնեց «Իվանիշվիլի» մակագրությամբ եւ «41» համարանիշով իր թիմի մայկան:

Տվյալ դեպքում, «41» թվանշանը խորհրդանշական է: Այդ համարի ներքո «Վրացական երազանքը» մասնակցեց եւ հաղթեց Վրաստանի խորհրդարանի ընտրություններում:

## ՀՐԱԺԱՐՎԵՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՐԿՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում գերատեսչության ղեկավարները հանդիպում ունեցան բարձր եւ առաջին լիգայի ակումբների ղեկավարների հետ: Ֆեդերացիան ներկայացնում էին նախագահ Զվիադ Սիճինավան, Ռեւազ Արվելաձեն եւ Մուրթազ Խուրցիլավան:

Նիստում հայտարարվեց, որ ութ ակումբներ հրաժարվում են Վրաստանի առաջնությանը մասնակցելուց, եթե չֆինանսավորվեն 2-ական միլիոն լարի գումարով, ինչպիսին պետությունից ստացել է Գորիի «Դիլա» թիմը:

Բոյկոտ են հայտարարել հետեւյալ ակումբները՝ Թբիլիսիի «Դինամոն», «Ձեստափոնին» «ՎԻՏ-Ջորջիան», «Մետալուրգը», «Սիոնին», «Զուգդիդին», «Մերանին», «Տորպեդոն»:

Ֆեդերացիայի ներկայացուցիչները հայտարարեցին, որ եթե ութ թիմեր հրաժարվեն մասնակցելուց, ապա առաջնությունը չի կայանա:

## ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Վրաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը անցած շաբաթվա ընթացքում անկացրեց ընկերական երկու հանդիպում եւ երկուսում էլ պարտություն կրեց: Վրաց ֆուտբոլիստները Դուբլինում 4 անպատասխան գնդակ ընդունեցին սեփական դարպասում, Դանիայի հավաքականի հետ Օլբորգ քաղաքում անցկացված մրցամարտում մրցակցին զիջեցին 1:2 հաշվով:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա երեկ՝ հունիսի 7-ին, այն Եվրոպայի առաջնության նախընտրական փուլի շրջանակներում ընդունելու էր Մալթայի թիմին, իսկ հունիսի 11-ին Կոպենհագենում ուժերը չափելու է Դանիայի հավաքականի հետ:

## ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է նոր վարկանիշային աղյուսակը:

Վրաստանի հավաքականը, նախորդ աղյուսակի համեմատությամբ, փոփոխություններ չի կրել եւ 391 միավորով շարունակում է զբաղեցնել 96-րդ հորիզոնականը: Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը առաջադիմել է մեկ հորիզոնականով: Հայաստանի ընտրանին ունի 408 միավոր եւ 89-րդ տեղում է: Վարկանիշային աղյուսակը՝ 1614 միավորով, գլխավորում է աշխարհի եւ Եվրոպայի գործող չեմպիոն Իսպանիայի հավաքականը: Երկրորդ եւ երրորդ տեղերը հաջորդաբար զբաղեցնում են Գերմանիայի եւ Արգենտինայի ընտրանիները: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցնում նաեւ Խորվաթիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի, Կոլումբիայի, Իտալիայի, Անգլիայի եւ Էկվադորի հավաքականները: Ռուսաստանի թիմը 11-երորդն է:

ՖԻՖԱ-ն վարկանիշային հաջորդ աղյուսակը կհրապարակի հուլիսի 4-ին:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հայ մեծ ողմնանկարիչ Ավետիսյանը: 6.Ավ.Իսահակյանի հերոս: 9.Հայ բանաստեղծ … Սարյան: 10.Հայերենի հոլով: 12.Փայտի շատ աննշան կտոր: 14.Գնդակով եւ ձողերով խաղ: 18.Չունեւոր, չքավոր: 21.Վրաց ֆուտբոլային մեկնաբան … Մախարձե: 22.Ապացուցման կարիք չունեցող դրույթ: 24.Ապակյա կամ փայտե աման: 26.Բռնելու հարմարանք, բռնիչ: 29.Ընտանի կենդանի: 31.Միս տվող: 34.Գրագիր, նաեւ եկեղեցու աշխատակից: 36.Ոչ հանդարտ, ալեկոծված: 37.Կուլտուրիստ, լավ, զարգացած մկաններ ունեցող: 38.… ու վատ անել: 39.Պետություն Ատլանտյան օվկիանոսի կղզիներից մեկի վրա: 40.Նախադասության անդամ: 43.Ջրահապատ կենդանի: 45.Շինանյութ: 47.Գետ Ռուսաստանում: 48.Դրանք յոթն են: 50.Շատ գեղեցիկ, հոյակապ: 51.… մեկը: 53.Դրաստամատ Կանայան: 54.Մարմնի մաս: 57.… ու տաղ: 59.Որդի, արու զավակ: 61.… եւ Շորշոռ: 62.Նիկոլ …: 64.Համադասական շաղկապ: 65.Խոջիվանքի պանթեոնում թաղված Րաֆֆու վիպակը՝ «Ոսկի …»: 66.Կանաչի, նաեւ դեղաբույս: 67.Վրաստանի բարեկամ պետություն Հս.Ամերիկայում: 68.Կարճ, կտրող: 69.Ոխ, մուռ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Պետություն Ասիայում: 3.Ազգ Ասիայում: 4.Մարդ-ավար պատերազմում: 5.Նեգր: 7.Գրավչություն, հմայիչ: 8.Մարդ, որը ոչինչ չունի: 11.Ղղար, վտիտ, նվազ: 13.Ոչ նոսր, մոտ-մոտ: 15.Երգչուհի … Մոն: 16.Մրգի տեսակ: 17.Ալֆա, …, գամմա: 19.Ագռավը բարբառով: 20.Հայ գեղեցիկ թագավոր: 23.Օդի հորիզոնական շարժումը: 25.Հարթուկ, արդուկելու գործիքը: 27.Մեղրի հումքը: 28.Կրծքի «հագուստը»: 29.Գայլերի, շների խումբը: 30.Հարսի եւ փեսայի ծնողները: 32.Օծանելիքի տարա: 33.Բնության արհավիրք: 35.«… մը Պոլսո թաղերուն մեջ»: 41.«Վրաստան» թերթի, տետրի …: 42.Շոկոլադի հումք: 44.Ձոքանչի ամուսինը: 46.Փայտից երկար աթոռ: 49.Մարդկության նախահայրը: 51.Քաղաք Հայաստանի Գեղարքունիքի մարզում: 52.Պետություն Հնդկաստանի հյուսիսում: 55.Սեւանի ձկնատեսակ: 56.Հայկական թռչուն, նաեւ Կոմիտասի երգերից: 58.Կիկոսի պոպոզ գլխարկը: 60.Ճեղք, ծակ, արանք: 63.Անապատի կենդանի:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Նվաստ: 8.Նորմա: 10.Տանձ: 11.Վաղ: 13.Կոտակ: 14.Ալաբամա: 16.Պնակ: 17.Ճոն: 18.Լիլիթ: 20.Խաթա: 21.Այն: 22.Խտիտ: 26.Ասիա: 28.Տաքսի: 31.Նար: 32.Կոտ: 34.Քսան: 35.Աբեղա: 36.Գիքո: 38.Օրի: 41.Միշտ: 43.Գիսանե: 45.Չաչա: 48.Նոյ: 49.Լավա: 52.Կուլա: 53.Դաս: 54.Դար: 55.Արիա: 56.Ջոն: 57.Կակա: 58.Կվա: 59.Մեծ: 60.Թիմ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Եվդոկիա: 2.Վտակ: 3.Հնձան: 4.Սրվակ: 5.Դավաճան: 7.Ստալին: 9.Եղանակ: 12.Ամոթ: 15.Լարիսա: 19.Լյուքս: 23.Տանգո: 24.Տիրան: 25.Գինի: 27.Փող: 29.Աքար: 30.Սագ: 32.Կեպի: 33.Տաշտ: 37.Քուին: 39.Ինչուիկ: 40.Գայանե: 41.Մել: 42.Շիվակի: 44.Սոդոմ: 46.Ակր: 47.Ալավ: 50.Աղաթ: 51.Արամ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge skype: VRASTAN-1920
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445